

# ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻՒ 7—9

ՅՈՒԼԻՍ—ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԿԵ. ՏԱՐԻ 1953

### ՄՈՂՍԷՍ ԳՐԵԹՈՒՐԱՆՑԻ (ԿՈՉՈՒՐՑԻ ԿՆՂՐՆԿԱՏՈՒՐԱՆՑԻ) ԵՐ ԻՐ ՊՈՏՄՈՒԹԻՆՆ ԸՂՈՒՐՆԻՑ

(Շարունակութիւն:)

2. ԵՂԻՇԷ ԱՌԱՔԵԱԼ ԵՒ ԳԻՒՏ ՆՇԽԱՐԱՅՆ  
(Ա. 6, 7, 9)

Աղուանից Պատմութեան մէջ (Բ. 48) յառաջ կը բերուի Սողոմոն Մաքենոցաց հօր մէկ գրութիւնը գրուած առ «Սողոմոն ոմն միանձեայ, որ յետոյ Հայոց եղեւ կաթողիկոս» (791—792), լի հակաժամանակագրական տեղեկութիւններով: Այս տեղ կ'ըսուի թէ Արրահամ կաթողիկոսի օրով (609—610) Աղուանները յանձն չառնելով Հայոց «գահերէցութիւնն ի վերայ Աղուանից» «գայլ ոմն Երեւեցուցին կանխաւ առաքեալ՝ եկեալ յաշխարհն Աղուանից՝ Եղիշէ անուն, յաշակերտաց Տեառն՝ ձեռնադրեալ ի ձեռանէ Յակոբու եղբոր Տեառն, քարոզեալ անդ եւ եկեղեցի շինեալ նախկին քան ի Հայս, առաջին մայր եկեղեցեացն Արեւելից գԳիսոյ եկեղեցին նորին հիմնադրեալ եւ զինքեանս նմա աւանդեալ՝ դարձան ի Հայոց առ ինքեանս՝ չլինելով ընդ ումեք իշխանութեամբ» (Բ. 48, էջ 311/12): Այս տեղի կ'ունենայ ժամանակ մը, երբ Հայք Յունաց իշխանութեան տակ էին, 591էն ետքը, հաւանօրէն 630—650 շրջանին: Աւելի հին գրաւոր յիշատակարան չունինք Եղիշէ առաքելի մասին:

Սողոմոն հօր յառաջ բերած տեղեկութիւնները գրեթէ բառ առ բառ անուշաւ են Աղուանից Պատմութեան Ա. 6էն: Այս տեղ կը պատմուի թէ Եղիշէ առաքելից մըն էր Թաղէոսի եւ անոր հետ հասած Արտազ: Երբ կը նահատակուի Ս. Թաղէոս, Եղիշէ կը վերադառնայ Երուսաղէմ, կը ձեռնադրուի (անշուշտ եպիսկոպոս Աղուանից) եւ կ'երթայ Աղուանից աշխարհը՝ «ճանապարհ արարեալ ընդ Պարսս, մտանէ ի Մազբուխ՝ խոյս առեալ ի Հայաստանեայց. եւ սկիզբն առնէ քարոզութեան ի Չողայ (Ճորայ պա-

հակ) ... եւ անտի եկեալ յուտի գաւառն... եկեալ ի Գիս, կանգնեաց զեկեղեցի եւ մատոյց զանարիւն պատարագն...: Յայտ տեղւոյ եղեւ սկիզբն արեւելեայցս եկեղեցեաց, մայրաքաղաքաց եւ լուսաւորութեան տեղի»: Կը նահատակուի Չերգունի դաշտակի մէջ:

«Յետ բազում ժամանակաց» կը յայտնէ Եղիշէ ինքնին իր նշխարները: Գլուխը Ուռեկանցի Ստեփանոս քահանայ կը տանի իր գիւղը. «եւ ապա անտի փոխեցին ի Ներամերհայ սուրբ ուխտն, որ այժմ կոչի Ջրվշտիկ»: «Իսկ յետ բազում ժամանակաց բարեպաշտն Վաչական Աղուանից արքայ կանգնեաց գախն ի գրի նահատակութեանն. եւ սենեկապանն արքայի մենակեաց եղեալ՝ ի վերայ սեանն կատարի» (Ա. 7):

Վաչական արքայի Վարքին մէջ յիշատակութիւն չէ եղած այս սինի մասին: Մեզի անձանօթ է առ հասարակ թէ վկայագիրը, որուն անունը չէ յիշուած, է՞րբ եւ ի՞նչ ազբիւրներու հիման վրայ յեցած գրած է Վկայարանութիւնս եւ վկայիս նշխարաց յայտնութիւնը, ինչպէս եւ փոխադրութիւնը:

Ս. Թաղէոսի վկայարանութեան մէջ, որ Չ. դարուն գրուած է, որ եւ է խօսք չէ եղած Եղիշէի մասին: Ս. Գրիգորիսի Վկայարանութեան մէջ (Ա. 14), որ յօրինուած է աղուան հեղինակէ մը, հաւանօրէն Բ. դարուն, կը յիշուի Ս. Թաղէոս, բայց լուծած է Եղիշէ առաքելի մասին (տե՛ս վարը):

Աղուանից Պատմութեան մէջ կը յիշատակուի Եղիշէ յատկապէս այն հատուածներու մէջ, ուր Խմբագրին գրիչը կը տեսնուի: Կասկածելի է Սողոմոն Մաքենոցաց հօր գրութեան մէջ Եղիշէի հայոց հատուածի հարադատութիւնը: Յամենայն դէպս Վկայարանութիւնս «յայտնուած է» յընթացս Բ. դարուն, թերեւս առթիւ նշխարաց փոխադրութեան «ի Ներամերհայ սուրբ ուխտն, որ այժմ կոչի Ջրվշտիկ»:

Վկայարանութեան սկզբնաւորութիւնը՝ «Պատմութիւն ճշմարիտ — տիրեաց կողմանցս Աղուանից: Իսկ» կը պատկանի Խմբագրին. իսկ «ի հասանել ժամանակի — ի Սա-

նատրկոյ արքայէն Հայոց» հատուածը փոխ առնուած է — ինչպէս ինձ կը թուի — Ս. Գրեգորիսի Վկայարանութենէն (Ա. 14), որուն սկզբնաւորութիւնը կը կազմէր:

3. ՎԱՐԲ ՎԱԶԷԻ ԱՂՈՒԱՆԻՑ ԱՐՔԱՅԻ (Ա. 10)

Աղուանից Պատմութեան մէջ անյարմար տեղ ազուցուած է Վաչէ Բ-ի վարքը: Զեւտեղուած է Գիւտ եպիսկոպոսի Ա. եւ Բ. թուղթերուն հետ (Ա. 11) ընդ մէջ Ա. 9 եւ 12 գլուխներու, ուր կը պատմուի Ուռնայր Աղուանից արքայի եւ Տրդատ Հայոց թագաւորի մասին, ուստի Ե. դարու ղէպքը Դ. դարու ղէպքերու միջեւ:

Այս ամբողջ գլուխը փոխառութիւն է, գրեթէ բառ առ բառ, Եղիշէի Պատմութեան Ը. Յեղանակէն (էջ 153—155, ըստ 1859ի տպագրութեան): Մինչ Եղիշէ կը խօսի լոկ «Աղուանից արքայի» մասին, այստեղ «Աղուանից արքայն» կ'անուանուի «Վաչէ»: Ինչո՞ւ Եղիշէ անյիշատակ թողուցած է արքային անունը. եւ ուսկի՞ց, ի՞նչ աղբիւրէ գիտէ Աղուանից պատմագիրը անոր «Վաչէ» անունը եւ անոր եղբոր «Յազկերտ» յորջորջումը (Ա. 17): Զուր է ամէն հարցաքննութիւն:

Աղուանից պատմագիրը Եղիշէի հատուածին մէջ աւելցուցած է նաեւ «ըստ Հայրենի աւանդիցն (Եղիշէ «հաւատոցն»), զոր Ուռնայր հաստատեաց եւ անօրէն Յազկերտ...»: Եւ վերջաւորութեան՝ «այս եղև վարք նորա»:

Այս յաւելուածները այն գրչէն են, որ գրած է Ա. 9 գլուխը: Նոյն ձեռքը պիտի տեսնենք քիչ յետոյ նաեւ Ա. 11ի մէջ: Եթէ անաշխատ կարող ենք հաստատել զայս. բայց աշխատանք պիտի պահանջէ այն հարցը, թէ ամբողջ այս հատուածը ի մասին «Աղուանից թագաւորի» ի՞նչպէս մուտ գտած է Եղիշէի Պատմութեան մէջ:

Այժմեան Եղիշէ կամ անոր խմբագիրը, որ Ղազար Փարպեցիին իրեն առաջնորդ ունեցած է, նաեւ այստեղ, 457—462 տարիներու համար, օգտուած է իր աղբիւրէն: Ղազար կը գրէ.

«Եւ կեցեալ Յազկերտի թագաւորին Պարսից զչափ ժամանակի կենաց իւրոց՝ վախճանէր ի փառստում (ա՛յսպէս): Եւ թագաւորեցին նորա երկու որդիքն, հակառակելով ընդ միմեանս. եւ զիմեալք ի վերայ միմեանց պատերազմաւ՝ յաղթահարեալ սպան կրսերն

զաւազն եւ ինքն թագաւորեաց, որում անունն էր Պերոզ: Եւ ի նմին ամի թագաւորութեանն իւրոյ առաքեաց զՅըզատվչնասպ զիւր դայեակորդին, զոր կարի յոյժ սիրէր առաւելապէս, եւ հրաման ետ արձակել զնախարարն Հայոց ի կապանաց եւ կարգել նոցա ոռճիկ ի Հրեւ» (108). «... պարզեւեաց դառնալ կապելոցն յաշխարհս Հայոց. որք եկեալ ի տունս իւրաքանչիւր յամի Զ. թագաւորութեանն Պերոզի» (110):

Ղազար, որ Յազկերտի «ԺԶ» տարին (էջ 6) յիշած էր, յուսալի էր, որ հոս ալ մահուան տարին յիշէր, որ է, ըստ Եղիշէի՝ ԺԹ. տարին, անշուշտ փոխ առած Փարպեցիէն: Այս պատճառով ալ կը թուի ինձ, թէ ընազրին անխմաստ տեղիքն «ի փարստում» աղաւաղութեան արդիւնք մըն է. եւ պէտք է վերականգնել սրբագրութեամբս. «ի ԹԺերոզում». կարգա՛յ յիննետասներորդում:

Յազկերտի երկու որդիները Որմիզդ եւ Պերոզ կուուեցան իրարու հետ գահին շուրջը. Որմիզդ զրաւած էր գահը. Պերոզ զիմեց Հեփթաղներու թագաւորին օգնութեան. որ յանձն առաւ օգնել իրեն ի գին Տաղական գաւառին: Յաջողեցաւ կրտսերը բառնալ երէցը գահէն եւ արեւէն (459/60): Պերոզ կը հաշուէ իր գահակալութեան սկիզբ 457/58էն: Փարպեցւոյ արտայայտութիւնը «ի նմին ամի թագաւորութեան իւրոյ առաքեաց զՅըզատվչնասպ զիւր դայե[ա]կորդին» պէտք է անշուշտ իմանալ՝ ուղարկեց 459/60ին «իւր գալեակին որդին»: Պերոզ արձակեց նախարարները իր թագաւորութեան Զ. տարւոյն, այն է 462/63ին: Թէ 459—462 տարիներուն Պարսկաստան ներքին խռովութիւններու մէջ զբաւուած է, այս մասին Փարպեցի որ եւ է ակնարկութիւն չէ ըրած:

«Եղիշէ» կը կրկնէ Փարպեցւոյ պատմածները իր ոճով, սակաւ ինչ ընդլայնուած: Նախարարներու «լուծումն ի կապանաց» վերագրած է Յազկերտի. ինչ որ Փարպեցի Պերոզի բարեացակամութենէն գիտէ: Թէ Որմիզդ Պերոզի «Ռահամ դայեակի» ձեռքով սպանուած է, անձանթ է Փարպեցւոյ: Փարպեցին չունի նաեւ «Աղուանից արքայի» ապստամբութեան շուրջը պատմուած միջադէպքը: Եթէ այս տեղիքները փակագծի մէջ առնենք, Եղիշէ կը գտնէ իր համաձայնութիւնը Փարպեցւոյ հետ: Ուստի ունինք մեր

առջեւ ընդարձակ հատուած մը Եղիշէի մէջ, որ եկամուտ կ'երեւայ:

Աւելի ըմբռնելի ընելու համար մեր այս տեսութիւնը կարելոր կը համարիմ յառաջրերել քաղուածարար Եղիշէի այս տեղիքները. եկամուտ մասերը, որոնք առաւելապէս Աղուանից արքային կը հային, կը ներկայացնեմ շղագիր:

Եղիշէ, էջ 150—155 խօսած է ընդարձակ կապեալ նախարարներու վրայ: Կը պատմէ թէ Յազկերտ իր թագաւորութեան վերջին տարիներուն զիջողարար վարուած է նախարարներու հետ, արձակած է անոնց կապանքները. խոստացած է նոյն իսկ «արձակել զնոսա յաշխարհն» (151—153): Բայց յապաղած է անոնց արձակումը թագաւորին մահուամբ (457): Հակառակ այս իրողութեան, նոյն Եղիշէ կը հաւաստէ, թէ անոնք իրենց տառապանաց մէջ կը տուայտէին, «զազանարար գետնախշտիք լինէին զինն ամ եւ զվեց ամիս» (էջ 150), ուստի 451 + 9.6 = 461/62, երբ Պերոզն էր Պարսից թագաւորն, իր թագաւորութեան հինգերորդ տարւոյն: Այս տեղ կամ Եղիշէ կամաւ հեռացած է Փարպեցւոյ ժամանակագրութենէն, եւ կամ իր խմբագիրը խառնակած է սկզբնական բնագիրը (հմմտ. Փարպ., էջ 108):

Եղիշէ կը գրէ շարունակութեան մէջ.

1. «Եւ մինչդեռ անդէն մեծաւ ինդութեամբ շրջէին (նախարարք արձակեալք ի կապանաց) ի կարաւանին առաջի թագաւորին (Յազկերտի):

2. Ի նմին ժամանակի հասանէր վախճան կենաց թագաւորին, յիննետասներորդի ամի թագաւորութեան իւրոյ:

3. Եւ ընդ հակառակս ելեալ երկու որդիք նորա (Որմիզդ եւ Պերոզ)՝ ի վերայ տէրութեանն կուուէին: Սասականայր գործ դառնութեան պատերազմին զերկուս ամս (458—459):

4. [Եւ մինչ դեռ նոքա յայնմ խռովութեան էին, ապստամբեաց եւ Աղուանից արքայն. վասն զի Բեռոզի էր նոցա (Որմիզդի եւ Պերոզի) եւ ըստ կարգի հայրենի հաւատոցն՝ քրիստոնեայ էր յառաջ եւ Յազկերտ արքայից արքայ բռնի մոգ արար: Եւ նորա գտեալ ժամանակ անձինն պարապոյ, հարկեցաւ գանձն ի մահ դնել. լաւ համարեցաւ մեռանել ի պատերազմի, քան ուրացութեամբ ունել զթագաւորութիւնն:]

5. Վասն այսր ամենայնի յապաղումն եղև շարձակելոյն նոցա յաշխարհն:

6. [Իսկ կրտսեր որդւոյն Յազկերտի դայեակն Ռահամ անուն ի Միհրան տոհմէն, քէպէտ եւ ետես զգունդն Արեաց ընդ երկուս բաժանեալ, սակայն կիսովն գազանարար յարձակեցաւ ի վերայ երէց որդւոյ քագաւորին, հա՛ր, սատակեաց զգունդն. եւ ձերբակալ արարեալ գորդի քագաւորին՝ անդէն ի տեղուջն հրամայէր սպանանել: Եւ գնացեալ գորսն ամէր հաւանեցուցանէր, եւ անէր միաբանութիւն ամենայն Արեաց գնդին. եւ քագաւորեցուցանէր զիւր սանն, որում անուն էր Պերոզ:

6. Զի քէպէտ եւ Արեաց աշխարհին անէր (Պերոզ) մեծապէս խաղաղութիւն, սակայն Աղուանից արքայն ոչ կամէր նուանել անդրէն ի ծառայութիւն (արքայից արքային). այլ խրամատեաց զպահակն շորայ եւ անցոյց յայսկոյս զգորսն Մաւքաց. միաբանեաց զմետասան քագաւորս զԲեռոզիայն. եւ ընդդէմ եկաց պատերազմաւ Արեաց գնդին. եւ բազում վնաս արար գորացն արհունի:

8. Թէպէտ եւ երկիցս եւ երկուս ետուն հրովարտակս աղաչանաց, ոչինչ կարացին ամել զայրն ի հաւանութիւն:

9. Այլ գրով եւ պատգամաւ յանդիմանէր գնոսա, վասն զուր աւերածի աշխարհին Հայոց: Յիշեցուցանէր նոցա զմահ նախարարացն եւ զչարչարանս կապելոցն: Ի վերայ անչափ սիրոյ եւ վաստակոց փոխանակ կեանս առնելոյ, զարեւ հատէք, ասէր: Լաւ լիցի ինձ, ասէ, գնոցա չարչարանս յանձն իմ անուլ, քան քողով գրիստոնէութիւնն:

10. Եւ իբրեւ տեսին (Սասանեանք), քէ ոչ բռնութեամբ եւ ոչ սիրով կարացաք ամել ի հաւանութիւն, գանձս սաստիկս ետուն տանել յաշխարհն հայլանդրաց. բացին զգորսն Ալանաց եւ հանին գունդ քագում ի Հոնաց եւ կուուեցան տարի մի ընդ Աղուանից արքայի:

11. Թէպէտ եւ քօթափեցան եւ ցրուեցան գորքն իւր ի նմանէ, սակայն գնա ոչ կարացին հնազանդել:

12. Այլ եւ հարուածք եւս մեծամեծք հասին ի վերայ նոցա (Պարսից), էր որ կուուով եւ էր որ ախտիւ չարչարանօք:

13. Եւ յայնչափ ժամանակաց ընդերկարի պաշարմանն, մեծ կէս աշխարհին աւերեցաւ, այլ ոչ ոք ի նմանէ երկմտեալ բաժանեցաւ:

14. Յդեաց առ նա դարձեալ քագաւորն Պարսից. «Զոյրդ իմ, աւէ, եւ գեոռորդիդ ի բաց տուր անձի, զի ի բնէ մոգք էին եւ դու քրիստոնեայ արարեր, եւ աշխարհդ քեզ լիցի»: Իսկ սքանչելի այրն ոչ ի տէրութեանն վերայ կուէր, այլ յաստուածաշտուութեանն: Զմայրն եւ զկինն ետ տանել. եւ զաշխարհն բովանդակ ի բաց եքոյ. եւ ինքն գաւետաբանն առ եւ յաշխարհէն ի բաց կամէր գնալ:

15. Զայս իբրեւ լուս քագաւորն, կարի գեղջ եւ ապաշաւ անկանէր ի միտս նորա. եւ գամեմայն վնասս իրացն գհարբն իւրով արկանէր: Անուտ երդումն կնքէր եւ տայր տանել առ նա, եքէ «Յաշխարհէդ միայն մի գնար, եւ զինչ ասես, առնես»:

16. (Իսկ նա) խնդրեաց գմանկութեան սեպականն, գոր հօր իւրոյ շնորհեալ էր նմա ի տղայութեանն, հագար էրդ: Ա՛ն գայն ի քագաւորէն եւ նստաւ ի նմա միայնակեցօք հանդերձ:

17. Եւ այնպէս հանապազորդեաց զինքն յաստուածային պաշտամանն, զի եւ չիշէր ամենեւին, քէ եւ քագաւոր լեալ իցէ յառաջ:

18. Եւ այս ամենայն յերկար խոսովութիւնք, որ եղեն մինչեւ ի հինգերորդ ամն Պերոզի արքայից արքայի, պատնաւք եղեն չարձակելոյ նախարարացն:

19. Այլ եւ ոռճկաւ եւ ի տաճար մտանել յարքունիս մեծապէս սուստացոյց քան զամաց սովորութիւնն: Եւ ի նմին Ե. ամին գրագմաց նոցա անդրէն զկեանսն շնորհեաց. եւ այլոցն առ յոյսն խոստացաւ՝ յամն Զ. միանգամայն արձակել զամենեւեան կենօք եւ պատուով:

20. Բայց ի տեղի այսր ինձ դարձեալ գալ պիտի»:

Եղիշէի այս ընդարձակ հաստուածին մէջ Փարպեցոյ ժամանակագրութիւնը խանգարուած է: Սկզբնագիր Եղիշէի մէջ պատմուած էր անշուշտ կապեալ նախարարներու կեանքը համաձայն Ղազարի:

Որմիզդ եւ Պերոզ եզրայրներու կռիւք, ինչպէս § 2—3էն կը տեսնուի, ներկայացուցած էր Եղիշէ հետեւելով Փարպեցոյ: Ուրիշ գրչէ է § 6, որ § 3ի ընդլայնումն է. «Ռահամ գաստիարակ որդւոցն Յագկերտի, ի Միհրան տոհմէ» կ'երեւայ թէ առնուած է Վահրամ Զորինի վէպէն: Թ. 4, 7—17, Աղուանից թագաւորի «Վարքը», ինչպէս կ'անուանուի Գաստիարանցոյ քով, եկամուտ է,

ներս առնուած այն գրչէն, որ աղճատած է Եղիշէի սկզբնագիրը: § 18 կրկնութիւնն է § 5ին:

§ 1 իր շարունակութիւնը ունի § 19ի մէջ, գրուած հետեւողութեամբ Փարպեցոյ:

Աչքի կը զարնէ հաստուածիս անխնամ շարագրութիւնը: Լեզուն ունի թերի կողմեր. պատմուածքը կը կրէ խակամիտ գրողի նկատմանը: Աղուանից արքայն օգտուելով Պարսկաստանի ներքին քաղաքական կռիւներէն՝ կը բարձրացնէ ապստամբութեան դրօշը իր մօրեղբայրներու դէմ. կը թօթափէ մոգակրօնի գեներ, զոր բուն ընդունած էր (450ի՞ն): Ան չէր ձգտէր որ եւ է քաղաքական նպատակի ի նպաստ իր ժողովուրդին: Զայրացած էր միայն, որ Հայերը ենթարկուած են բազմապիսի զրկանքներու: Ընդհարումները Պարսից հետ կը շարունակուին Պերոզի գահակալութենէն ետքն ալ: Աղուանից արքայն դեռ չէր ընկճուած: Պերոզ կը հարկադրուի տեղի տալ. «Զքոյրդ իմ, աւէ, եւ զբոռորդիդ ի բաց տուր անձի... եւ աշխարհդ քեզ լիցի»: «Իսկ սքանչելի այրն ոչ ի տէրութեանն վերայ կուէր, այլ յաստուածաշտուութեանն»: Թէպէտ յաղթականն էր, բայց «զմայրն եւ զկինն ետ տանել, եւ զաշխարհն բովանդակ ի բաց եթոյ. եւ ինքն զԱւետարանն ա՛ն եւ յաշխարհէն ի բաց կամէր գնալ»: Ի վերջոյ կը զիջի առնել այն «հագար երդ» պարունակող հողամասը, զոր ստացած էր իր հօրմէն եւ կ'առանձնանայ այն տեղ ճգնելու: «Աղուանից արքայի» վարքին այս վերջաւորութիւնը չի՞ յիշեցնէր Պատմութիւնն որդւոյ թագաւորին Հոռմայ», կամաւոր աղքատացելոյն, որ «առեալ 1300 դահեկան եւ աւետարան մի փոքրիկ» կ'առանձնանայ Եգիպտոսի անպատը (Վարք Հարանց, Ա., էջ 361) իբրեւ ճգնաւորակից այնտեղ ճգնողներու: Այս Պատմութեան թարգմանիչն է Գագիկ, հայրն Ատոմավանքի 873ին: Կան նոյն պատմութեան եւ այլ խմբագրութիւններ (անդ, էջ 126—161, 369—390): Յամենայն դէպս նկատի առնուած է հոս Մատթ. ԺԹ. 29, տէրունական խրատը. զոր յառաջ բերուած կը գտնեմ Ա. 11 (տե՛ս վարք):

Բայց այսպիսի «աստուածաշտուութեան» համար կ'արժէ՞ր երկրին զօրքը ոտք հանել, ճորայ պահակը խրամատել. Մասքթաց գրոհը հրաւիրել եւ «մեծ կէս աշխարհին» աւերել: Եւ երբ ձեռնթափ կ'ըլլայ Պերոզ

Աղուանից աշխարհէն, ինքը կամաւ կը յանձնէ զայն Սասանեանց քահանայքին:

Ոչ գրութեան ոճն Եղիշէին է եւ ոչ ալ բարեպաշտ միամտութիւնը. բայց կարի քաջ Եղիշէի խմբագրիւնը:

Եթէ ենթադրենք, թէ Պերոզ հալածած ըլլայ «Աղուանից արքայն», այս հալածանքը միայն անոր կրօնափոխութեան համար կրնար ըլլալ, այսինքն արքայն քրիստոնեայ էր եւ եղած մոգակրօնիկ, ապա դարձեալ քրիստոնէութիւնը վերընդունած: Պերոզի պահանջը, թէ «Զքոյրդ իմ եւ զբոռորդիդ ի բաց տուր անձի, զի ի բնէ մոգք էին եւ դու քրիստոնեայ արարեր, եւ աշխարհդ քեզ լիցի». զայս միայն կարող էր ենթադրել:

Յամենայն դէպս եթէ Հայաստանի սահմանի վրայ Պարսից եւ Աղուանից մէջ այնպիսի երկարատեւ եւ բուռն պատերազմներ տեղի ունեցած ըլլային, Ղ. Փարպեցի գոնէ հարեւանցի ակնարկութեամբ մը յիշած պիտի ըլլար:

Հատուածիս մէջ ուշադրութեան արժանի կէտերս ալ կան: Կ'ըսուի թէ Աղուանից արքայն «խրամատեաց զՊահակն ճորայ եւ անցոյց յայս կոյս զգորսն Մասքթաց»: Փաւստոս (Գ. 5—6) Մասքութիւնը յայս կոյս ճորայ պահակին դիտէ: Իսկ Փարպեցի յայն կոյս Պահակին գտնուած ժողովուրդը «հոն» կ'անուանէ. այսպէս նաեւ Աղուանից պատմիչը: Եղիշէ (59) ճորայ պահակը անգամ մը «Պահակ Հոռմաց» անուանած է, որուն պահպանութիւնը, կ'ըսէ, յանձնուեցաւ «ի ձեռն Վահանայ, որ էր յազդէ թագաւորացն Աղուանից» (համաձայն Փարպեցոյ, էջ 66):

Կ'ըսուի դարձեալ, թէ Պարսիկը «գանձս սաստիկս ետուն տանել յաշխարհն իսայլանդրաց, բացին զգրուս Ալանաց. եւ հանին գունդ բազում ի Հոռմաց եւ կուռեցան տարի մի ընդ Աղուանից արքայի»: Խայրանդրաց աշխարհն եւ ժողովուրդը Եղիշէի քով միայն կը յիշուին. «Գաղարեցին իսայլանդրոյք իլանի ընդ պահակն ճորայ» (11). «Հոն մի, որ էր յազդէ թագաւորացն ի իսայլանդրաց աշխարհէն, Բէլ անուն» (110):

Տակաւին չէ լուսարանուած, թէ ո՞ր ժողովուրդը կ'իմանայ Եղիշէ այս անունին տակ: Անունս կազմուած է անշուշտ Խայրանդուր մասերէ, ունինք անոր մերձաւոր անունս. «Վընդուր Բուզկարք» (Մ. Խոր. Բ. 6): Այս ժողովուրդին հայրենիքը գիտէ Մ. Խոր. Բ. 9. «ի գօրիս մեծի լերինն Կաւկասու յաշխար-

հին Բուզկարայ»: Աշխարհացոյցն ունի «ըստ հիւսիսոյ (Կովկասու) ազգ Թուրքաց եւ Բուզկարաց, ըստ անուանց զետոյզ կոչեցեալ Կուփի Բուզկար... Ողխնտար Բլիար» եւն: Marquart, Osteuropäische und ostasiatische Streifzüge, Leipzig 1903, էջ 57, 500) անունս հետ համեմատութեան կ'առնէ Բուզկարացոց յիշած Սոյնսոյսոյսոյսուրու գար ժողովուրդը:

Եղիշէ «Խայրանդրաց աշխարհը» կ'ենթադրէ յայնկոյս ճորայ պահակին, իսկ ժողովուրդը «հոն»: Անոնց ելքը դէպի յայսկոյս ճորայ պահակէն է (էջ 11): Իսկ այս տեղ որովհետեւ ճորայ պահակէն Մասքութիւնը եկած էին, Խայրանդրաց աշխարհի Հոռմերուն առջեւ Ալանաց դուռը, այն է Դարիալ, կը բացուի: Թէպէտ յիշուածին ոչ մէկն եւ ոչ միւսը պատմական են, սակայն ակնբախ է, որ հոս Եղիշէ եւ խմբագիրը կը հակասեն իրարու:

Ի՞նչ աղբիւրէ կարող էր առած ըլլալ խմբագիրն այս տեղեկութիւնները:

Այն պարագայէն որ Աղուանից արքայն կը ներկայացուի Որմիզդ եւ Պերոզ արքայազուններու քեռորդին, ուստի Յագկերտ Բ. ի դատեր որդի, կարելի է հետեւցնել, թէ խմբագիրը հոս աղուան աղբիւրէ մը ջուր կրած է: Աղուան պատմագիրներու սնապարծութիւնն էր, իրենց թագաւորներն եւ իշխանները պարթեւ-սասանեան տունէն սերեցնել: Վաշական արքայ որդին էր Յագկերտի, երբօր Վաշէ արքային, որոնք Յագկերտ Բ. ի դատեր որդիներն են: Վաշէի հօր անունը չէ յիշուած: Այս Վաշէ նոյն է Եղիշէի «Աղուանից անանուն թագաւորին» հետ: Ան 458ին ապստամբած է Պարսից դէմ: Այսպիսի յանդուգն խիզախութեան համար ան պէտք է առնական հասակի մէջ գտնուած ըլլայ. գոնէ 30ամեայ մը: Այս ենթադրութեամբ անոր ծնունդը պիտի իյնար 427ին, ուստի Յագկերտ Բ. ի գահակալութենէն 10 տարի յառաջ: Կորիւն (ԺԱ. 1—6) իբր 415ին կը յիշէ Աղուանից Արսուողէն թագաւորը իբրեւ «այր երկիւղած յԱստուծոյ», որ այնքան սիրայօժար ձեռնուտ եղաւ Մաշտոցի Աղուանից աշխարհի լուսաւորութեան համար: Կամ Արսուողէն եւ կամ իր որդին պէտք է հայրն կրած ըլլայ Վաշէի: Բայց եթէ Վաշէ Արսուողէնի թոռնիկը համարուի, անոր ծնունդը հարկադրաբար 450էն ետքը պիտի ենթադրուի. երբ սկիզբ եղաւ քրիստոնէութեան

հարածանքի Հայաստանի, Վրաստանի եւ Աղուանից աշխարհին մէջ: Այս դէպքին ժամանակը թոյլ պիտի չտար կնութեան առնելու իր քոյրը, ըստ պարսկական օրինի: Դարձեալ ե՞րբ քրիստոնէայ մկրտուեցաւ, երբ բռնաբար մողակրօնիկ եղաւ եւ ե՞րբ միւսանդամ քրիստոնէութիւնը վերընդունեցաւ: Այս նկատի առնելու է, որ Աղուանից պատմադրեաներու քով ոչ թէ տարին 365 օր ունի, այլ ամիսը:

Եթէ ուշադրութեամբ հետեւինք «Աղուանից արքայի» պատմութեան, պիտի տեսնենք հոն երկու ձեռք. մին կը պատմէ Պերոզի գահակալութիւնն եւ Աղուանից արքայի ապստամբութիւնը. Պերոզ կը ջանար քաղցրութեամբ շահիլ ապստամբ թագաւորը, որ ի վերջոյ տեղի կու տայ: Իսկ միւսը կը սաստկացնէ նախ արքայազուն եղբարց ներքին կռիւները եւ ապա Աղուանից արքայի բանակին ստուարացումը Մասքթայ գօրքով եւ Պերոզի գօրքին աճումը Հոնայ նիդակակցութեամբ: Առաջինը կը խօսեցնէ երկու թագաւորները եզակի դէմքով, երկրորդը յոգնակի դէմքով եւ յաճախ անքերական ոճով:

Առաջին գրիչը աղուան է, հաւանօրէն նոյն Վաչագանի պատմիչին հետ. երկրորդը Եղիշէի Սմբագիրը: Մովսէս Դասխուրանցի հետեւած է Եղիշէի խմբագրին, տեղիս տեղիս յապաւումներով եւ տեղիս տեղիս կոկիւղով Սմբագրին անհարթ ոճը: Իր գրչին է «Ունայր»ի յիշատակութիւնը եւ Աղուանից արքայի Վաչէ անունը:

Այս հատուածի մէջ այն տեղիքը, ուր կ'ըսուի, թէ Աղուանից արքայն «գմայրն եւ զկիւնն ետ տանել... եւ ինքն... յաշխարհէն ի բաց կամէք գնալ». եւ Պերոզի պատասխանը, թէ «Յաշխարհէզ միայն մի գնար եւ զինչ ասես առնեմ». եւ արքային խնդիրը, թէ տուր ինձ այն «հագար երդը», զոր հայրս չնորհած էր ինձ, ինչ որ կը ստանայ եւ կը մնայ. շատ նման է այն պատմութեան Բ. 17: Սոսրով Բ. Պարուզի օրով, իրր 592ին, Միհրան, ազգակից Սոսրովու, կասկածելով թագաւորին վրէժխնդրութենէն՝ «առեալ երդս իրբեւ 30.000» կը գիմէ փախուստի: Երբ կ'իմանայ զայս թագաւորը, կը փութայ սուրհանդակով հասցնել իրեն հրովարտակ մը. «Եղբայր իմ եւ հարազատ, մի լիցի քեզ հեռանալ յինչն թշնամութեամբ...: Ուր հրովարտակդ իմ հասանէ, երկիրդ քեզ լիցի

ի բնակութիւն»: Սուրհանդակը կը գտնէ զինքը Գարդման գաւառին մէջ: Միհրան կը զետեղուի այն տեղ:

Պատահականութեան պէտք է վերագրել այս նմանութիւնները: Վերջինիս մէջ առանց տարակուսի Վահրամ Չորինի վէպին մէկ տարբերակը ունինք: Վահրամ ի Միհրան տոհմէ փորձեց յինքն կորզել Սասանեանց գահը. երբ պարտուեցաւ, զիմեց բանակին հետ փախուստի. Սերիոս կը գրէ. «Եւ ոչ որեք կարացին գտանել զհետս Վահրամայ. զի զերծաւ եւ զնայ այսպէս փախստական եւ չողաւ եւ անկաւ ի Բահլ շահաստան. որպէս (բան է)՝ ի բանէն Սոսրովայ սպանաւ ի նոցունց իսկ» (էջ 40, Պատկ.): Ըստ պարսկաբարական աղբիւրներու՝ Վահրամ փախստական հասաւ Սորասան, ապա զնայ Թուրքերուն քով. այն տեղ ի բանէն Սոսրովու սպանուեցաւ (Nöldecke, Tabari, էջ 289): Իր շուրջը կազմուեցան ապա զանազան վէպեր: Ուստի զարմանալի պէտք է երեւայ, եթէ Աղուանը ալ պարծին, թէ հիւրընկալու եղած են Վահրամ Միհրանի: Տարբեր Վահրամը կ'անուանէ Չորին («փայտեայ»). այս յորջորջումը ծանօթ է նաեւ Աղուանից պատմագրին (Բ. 17):

Անհաւանական է, եթէ ըսենք թէ նոյն վէպին ուրիշ մէկ տարբերակն եղած ըլլայ Եղիշէի վերոյիշեալ հատուածն ալ:

Որմիզդ եւ Պերոզ եղբարց քեռորդին է «Աղուանից թագաւորը», Ռահամ դայեակն Պերոզի կը սպանէ Որմիզդ Գ. ը՝ ի նպատակ Պերոզի: Աղուանից արքայն կ'ապստամբի. ծանր կռիւներու դուռ կը բացուի: Աղուանից արքայն կը խորհի հեռանալ երկրէն եւն: 590ին ապստամբութիւն մը կը ծաղի Տիգրան. Որմիզդ Գ. կը կալանաւորուի եւ կը կուրացուի: Վնդոյ եւ Վստամ եղբարք թագաւոր կը հռչակեն իրենց քեռորդին Սոսրով Բ. Պարուզ. Վահրամ ի Միհրան տոհմէ կ'ապստամբի Սոսրովի դէմ եւ կը քայլ Տիգրանի վրայ ի խնդիր թագին: Վնդոյ եւ Վստամ իրենց քեռորդոյն հետ կը գիմեն փախուստի. Վնդոյ կը սպանէ Որմիզդը: Կը վերագառնան թագաւորին հետ յունական բանակով. կը բախին Վահրամի հետ. վերջինս պարտուած կ'երթայ փախստական: Սոսրով Բ. գահը ապահոված՝ կը սպանէ Վնդոն. իսկ Վստամ կ'ապստամբի արքայից արքայի դէմ. կռիւները կը շարունակուին հինգ տարի...: «Ռահամ դայեակ» կարող է նոյնացուիլ թէ Վահրամի եւ թէ Վստամի հետ. վերջինս իրբեւ քեռորդի կարող է նկատուիլ որպէս դայեակ: Որմիզդ Գ. եւ Գ. երկուքն ալ սպանուած են գահին վրայ: Վիպական պատմութեան մէջ հերոսներու դէմքերը դիւրաւ կարող են փոփոխուիլ:

րամի եւ թէ Վստամի հետ. վերջինս իրբեւ քեռորդի կարող է նկատուիլ որպէս դայեակ: Որմիզդ Գ. եւ Գ. երկուքն ալ սպանուած են գահին վրայ: Վիպական պատմութեան մէջ հերոսներու դէմքերը դիւրաւ կարող են փոփոխուիլ:

Զարմանալի է, որ այս արքայն Աղուանից բոլորովին անյիշատակ մնացած է Բ. 2:

4. ԳԻՒՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ Ա. ԵՒ Բ. ԹՈՒՂԹԵՐՆ ԱՌՎԱԶԵ ԵՒ ԵՂԻՇԻ ՆԵՐՔՈՂԵԱՆՆ Ի ՔԱՅՆ ՎԱՐԴԱՆ (Ա. 11)

Աղուանից Պատմութեան Ա. 11 գլուխը կը ներկայացնէ երկու թուղթ գրուած Գիւտ եպիսկոպոսին Վաչէ արքային:

«Գիւտ եպիսկոպոսի» անձին շուրջը չէ հաղորդուած որ եւ է տեղեկութիւն: Որովհետեւ Վաչէ արքայի ժամանակը ցոյց կը տրուի Պարսից Պերոզ թագաւորի (457—484) օրով եւ այս շրջանին կը յիշուի Ղ. Փարպեցիէն Գիւտ եպիսկոպոս Արահեցի, որ վարած է ժամանակ մը Հայոց կաթողիկոսութիւնն եւ ապա գահընկէց եղած Պերոզի հրամանով (Փարպ. 110), ուստի «Գիւտ եպիսկոպոս» պէտք է նոյնացուի Գիւտ եպիսկոպոս կաթողիկոսին հետ եւ թղթերուս գրութեան ժամանակը զետեղուի 460—470 տարիներու մէջ:

Բայց տեսնք վերագոյն, թէ Եղիշէի «Աղուանից արքայն», զոր Աղուանից պատմագիրը «Վաչէ» կ'անուանէր, պատմական անձնաւորութիւնն չէր. հետեւաբար չէր կրնար «Գիւտ եպիսկոպոս» անոր թուղթեր գրած ըլլալ: Կը մնայ եզրակացնել. ինչպէս Վաչէի վարքը, նոյնպէս թուղթերս կեղծիք են: Այդ կեղծարարն ունեցած է ձեռքի տակ Ազաթանդեղոսի Պատմութիւնը, որ գրուած է 490ին. ուստի ան 490էն ետքն է: Ա. թուղթին մէջ կը յիշուի Ունայր արքայ Աղուանից, որ լսելով Տրդատի դարձն ի քրիստոնէութիւն, կ'այցելէ հետեւորդներով Վաղարշապատ, կ'ընդունի քրիստոնէութիւնն եւ Հոռմէ կ'իմանալ եպիսկոպոսի մը հետ կը վերագառնայ իր երկիրը: Այս միջնադէպը անձանօթ է ինչպէս Ազաթանդեղոսի, նոյնպէս Վաչագանի կենսագրին, որուն գրչին է նաեւ Ա. 14 գլուխը: Այս կենսագիրը 570էն ետքն է, հաւանօրէն Ը. դարու սկիզբն ապրած: «Աղուանից Ունայր արքայն» առաջին անգամ կը յիշուի Հայոց պատմութեան մէջ 369ին, որ Շա-

պուհ Բ. արքայից արքայի բանակին մէջ կը կուուի Հայոց Պապ թագաւորի դէմ (Փաւստոս Ե. 4): Այս դէպքը գիտէ նաեւ Աղուանից պատմագիրը, օգտուելով Մ. Սորենացիէն (Սոր. Գ. 37, Մ. Դասխ. Ա. 13):

Թէ ինչպէս այս Ունայրը Տրդատի ժամանակակից ներկայացուցած է այդ պատմագիրը, զմեզ չի հետաքրքրեր հոս. յամենայն դէպս այս նոյնացումը կատարուած է 850էն ետքը եւ 950էն յառաջ, վասն զի Մովսէս Անանիա կաթողիկոս կարդացած է թուղթս 950ին (Արարատ, 1896, էջ 67):

Մենք հասանք այնպիսի շրջան մը, երբ խմբագրուած կը համարուէր Եղիշէի Հայոց պատերազմի Պատմութեան մեզի հասած օրինակը:

Կ'ըսուի թէ այս թուղթերը գրած է «Գիւտ եպիսկոպոս», ուստի մէկ հեղինակ. բայց ուշադիր ունիւղբելով անոնց՝ կը զգանք, թէ երկու հնչիւններ կը հասնին մեր լսողութեան, թէ հազազով եւ թէ շեշտով գանազան: Հերոս մը նկատի առնուած է հոն, որուն կ'ուղղուին հիացախառն ներբողական արտայայտութիւններ: Մին կը բարբառի հետորական ոգեւորութեամբ, բայց մտերմօրէն, եզակի երկրորդ դէմքով. երկրորդը պատմական խոհերով եւ յոգնակի երկրորդ դէմքով, ուստի աւելի քաղաքավարօրէն, քաջալեր կը հանդիսանայ: Լեզուի եւ ոճի այս գանազանութիւնը ակամայ ենթադրել կու տայ մեզի, թէ խմբագիր գրուածք մ'ունինք մեր առջեւ: Գրութիւն մը, որ իրբեւ խմբագրութիւն կը նշաւակուի, կ'ենթադրէ, թէ մէկէ աւելի հեղինակութիւններու միացումն է, կատարուած յապաւումներով, տեղափոխութիւններով եւ յաւելումներով:

1950ին նկատի առնելով Եղիշէի տեղիքը. «Բայց ի տեղի այսր ինձ դարձեալ զալ պիտի», գրած էի. «ինձ կը թուի, թէ Եղիշէ իր խոստումը կատարած է ինքնուրոյն գրուածքի մը մէջ: Այդ գրութիւնը կը ներկայացնեն այն երկու յանուն Գիւտ կաթողիկոսի թուղթերը, որոնք գրուած են Աղուանից Վահէ թագաւորին...: Ոճն եւ լեզուն Եղիշէինն են. կան նոյնանման արտայայտութիւններ<sup>1</sup>»:

Այժմ, երբ ի մերձուստ քննութեան կ'առնեմ այս թուղթերը, երեւան կու գայ, որ անոնք ոչ թէ նոյնութեամբ, այլ խորքով միայն

<sup>1</sup> Արիւնեան, Եղիշէ վարդապետ եւ իր Պատմութիւնն Հայոց պատերազմին, Հանդ. Ամս. 1950, էջ 421—422 = արտատպ. Գ., էջ 388:

Եղիշէին կը պատկանին: Ուշագրութեամբ հետեւելով այդ խմբագիր Թուղթերու այն հատուածներուն, որոնք Եղիշէի կնիքը կը կրեն, կը զգանք թէ այն տեղ Քաջն Վարդանի դէմքն է, որ կը ցցուի մեր առջեւ, ճշգրիտ այն դեմքով, ինչպէս նկատած էինք զայն Եղիշէի Հայոց պատերազմի Պատմութեան մէջ. սուր ի ձեռին հայ բանակին առջեւ խիզախած Ոսուրով Ա. ի բանակներու դէմ: 571—573 տարիներու հայկական ապստամբութեան պարագլուխը, հայ բանակին սպարապետը կը ներբողուի հոն:

Այս պատկերին առջեւ տարակոյս չի մնար այնուհետեւ թէ Ե՛րբ յօրինած է Եղիշէ այս ներբողը կամ ձառը եւ ի՞նչ նպատակով: Նախնարար կը կազմէր ան վերջարանը Եղիշէ Հայոց պատերազմի Պատմութեան է. յեղանակի վերջաւորութեան, իրբեւ լրացուցիչ մասը Նախարանին: Իսկ «Գիւտ եպիսկոպոս» գտած ըլլալու է զայն ներկայ խմբագրութեան Ը. յեղանակի վերջը, հաւանօրէն մերձեցուած անանուն «Աղուանից արքայ»ին: Ինչպէս առած է ան Աղուանից Պատմութեան մէջ Աղուանից արքային վարքը մանր փոփոխութիւններով եւ «Վաչէ», «Ուռնայր» անուններու յաւելումով, նոյնպէս ներբողը վերածած է թղթերու եւ ներմուծած է հոն «Ուռնայրի» դարձի կեղծ պատմութիւնը:

Այս նոր յայտնութիւնը կը հարկադրէ զիս ամբողջութեամբ յառաջ բերել այս տեղ Ա. Թուղթը եւ Բ. Թուղթէն ինչ ինչ տեղիքներ, որոնք սերտիւ կապ ունին Ա. Թղթին հետ եւ կը թուին նոյնպէս Եղիշէի վերջարանէն առնուած ըլլալ:

Հրատարակութեան համար բնագիր առած եմ Էջմիածնի Թ. 1531 հնագոյն ձեռագիրը, որ գրուած է 1289ին: Աչքի առաջ ունիմ Սաչիկ Վ. Գաղեանի համեմատութիւնները: Նկատի չեմ առներ Ա. եւ Բ. խումբերու այն օրինակները, որոնք Թ. 1531էն ծագած են:

Այն տեղիքները, որոնք յայտնապէս խմբագրին ձեռքէն են, կը ներկայացնեն շղագիր: Կան անշուշտ խմբագրէն մանր յաւելուածներ եւ այլ հատուածներու մէջ. այսպիսիներէն ինչ ինչ տուած եմ նոյնպէս շղագիր:

Թուղթ Գոսայ Եպիսկոպոսի առ սրբազան Վաչէ:

1. Երկնաւոր շնորհօքն Աստուծոյ ողջոյն:

2. Ի ճառս սուրբ սիրոյ քո սուաքինութեան ի կամս կամաց անձին իմոյ բղխեցին միտք իմ երկնաւոր զօրութեամբն. յօժարեցի պատմող լինել բանիւ. եւ ահ անկաւ ինձ մեծ եւ ահագին եւ բարձրագոյն քան զերկինս երկնից եւ խորագոյն քան զնեղքին կիսազունդն. եւ յամենայն կողմանց շուրջ պաշարեաց զիս ի վեր եւ ի վայր, ի վերջ եւ յառաջ, յաջ եւ յահակ. փախչել ոչ կարեմ եւ խորամուխ լինել երկնչիմ, եթէ գուցէ ընկղմեցիմ որպէս Պետրոս առաքեալ՝ ի ծով անդնդային:

3. Բայց եթէ տէր Յիսուս ձեռն կարկառուցու յօգնականութիւն՝ յայս սակաւ քաջալերեցայց եւ յանմուխ մխեցայց: Քանզի բան ունիմ մտաց գործի, եթէ գացի ինչ հիւթանիւթ (ի) հողեկիր [յառաքինութենէ] արանց քաջաց, որք զհրեշտակս ածին ի զարմացումն եւ անդիր օրինօք անձամբ անձին օրէնք եղեն եւ զառանց օրինաց Տէրն ի վեր ծանեան եւ զեղևալսն զիտացին ընդ օրինօք, եւ առանց առաջնորդի, մարգարէի ուրուք կամ երկնաւոր հրեշտակի, աստուածատես եղեն:

4. Արդ ահա (յորմէ) երկուցեայն էի ի կեանս սիրով մօտիմ եւ յուսով մերձենամ եւ հաւատովք աներկիւղ հաստատիմ. եւ սկսանիմ ուստի արժանն է սկսանել:

5. Որպէս յառաջագոյն սէրն Քրիստոսի բնակեաց ի նախնայն ձեռում Ուռնայրի, նախանձ երկնաւոր երբեք ընդ Տրդատայ Հայոց արքային, իբրեւ յուսա գլխամեծ սխանչիլս Աստուծոյ, որ ի ձեռն սրբոյն Գրիգորի նշանք եւ արուեստք գործեցան յաշխարհին Հայոց՝ վաղվաղակի դառնալ ի բազում շաղագ մոլոր քանապարհին առ նշմարիտն Աստուած ծանօթութեամբ եւ բարեկամութեամբ ի բաց ընկեցին զձանրատաղտուկ գլուծն հեթանոսաց. քեքեացան, քօքափեցան, քեւակոխեցան, քոեան եւ ի յերկինս նգնեցան:

6. Զայս լուեալ քաջին Ուռնայրի՝ ոչ դլաց եւ ոչ դադարեաց եւ ոչ ի ձեռն ծառայական երեշտակին, այլ իմեմին մեծ քաղաւորն մեծամեծօք, նախարարօք եւ բազմագունդ զօրօք գայր հասանէր յաշխարհն Հայոց, յանդիման լինէր սկայագօր քաղաւորին:

7. Իսկ նորա եղբայրաբար սիրով, բարեկամութեամբ ընկալեալ՝ բոլոր զիմեմ առաջի առնէր նմա, զնեքին եւ զարտաքին խորհուրդս մերկանայր եւ դնէր առաջի նորա հանդերձ սրբովն Գրիգորիս եւ ամենայն բազմութեամբ զօրացն Հայոց:

8. Խոնարհէր քաղաւորն ձեր, անկանէր եւ պատէր գոտիւք եւ ձեռօք, պատմէր գամենայն մոլորութիւն հեթանոսաց եւ իմեմ խոստովան լինէր վասն տգիտագործ մեղացն անցելոց:

9. Քաջալերէր գնա սուրբն Գրիգորիս ի գալուստ մարմնաւորութեան Որդւոյն Աստուծոյ, որ ի քողութիւն եկն եւ ոչ ի դատապարտել, ի կեցուցանել եւ ոչ ի մեռուցանել. եւ յառաջանցելոց ի հողոյ կեանս խոստացաւ:

10. Զայս ամենայն իբրեւ լսէր քաղաւորն ձեր, իմեմ եւ ամենայն զօրքն որ ընդ նմա գաւուրս քառասուն պահոց աւանդէին զանձինս իւրեանց, ի բաց հրաժարելով յառաջին ստգտանելի գործոց: Եւ յաւուրն յիսներորդի իբրեւ ուրացան ի սատանայէ եւ յամենայն գործոց նորա եւ խոստովանեցին գուրք երրորդութիւն՝ էջ քաղաւորն յամենասուրբ ջուրն եւ ամենայն զօրքն ընդ նմա: Եւ կատարեաց զնոսա քահանայն ի վերստին ծնունդ ի յերկնաւոր երրորդութիւն: Ելին ամենեքեան Հոգւովն սրբովն:

11. Ի նմին ժամանակի շնորհեցաւ նոցայր մի երանելի ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն ի Հոռոմ քաղաքէ, որ եկեալ էր ընդ Տրդատայ արքային:

12. Այսու երկնաւոր բարեօք եկն Ուռնայր արքայ, եմուտ յաշխարհն Աղուանից. ուսաւ եւ կատարեաց զնոսա առաքելական կանոնօք: Ընկալան ամենեքեան զգործմն երկնաւոր եւ գրեցան ի դպրութիւն կենացն:

13. Հալածեցան դեւք աշխարհիւ, խափանեցան զհօք եւ ճենճերք, ամաչեաց մոլորութիւնն, բարձրացաւ ճշմարտութիւն, թաղաւորեաց լոյսն աներեւոյթ, մերժեցաւ կամաւոր խաւարն:

14. Կարգեցան երեխայրիք եկեղեցւոյ, տասաներորդեցան պտուղք կալոց եւ հնձանաց, անդոց եւ շարանաց եւ ամենայն ընտանի անասնոց: Նաեւ զհող երկրին եւս ի նոյն վիճակեցոց: Եւ հաստատեալ կալաւ կարգ ուղղութեան առ նախնեօքն ձեռովք՝ հանեօք եւ հարն քոյով երանելեալ մինչեւ ի ժամանակս քո սքանչելի տէրութեանդ:

15. Վիշապն, որ հինն էր յաւուրցն առաջին մարդոյն, ետես զչքնաղ ծնունդ քոյոյ բնութեանդ յառաջին ի հայրենի հաւատոցն, երկրորդ որ ի գոռոզ վիճակին, յոյժ կասկած ի միտս անկաւ շարասէր թշնամոյն, եթէ գուցէ ընդ որ եղեւ մուտ կենաց յաշխարհս արեւելից, ընդ այն ծնունդ եմուտ ճշմարտութեան յաշխարհն արեւելից:

16. Շտապեցաւ, տաքնապեցաւ, տարակուսեցաւ առաւել քան յաւուրսն Յորայ արդարոյ: Ժողովեաց, գովարեաց զգօրսն իւր խաւարայինս, յայտնեաց նոցա զխառն շար, որ տանջէրն գնա: Ամենեքեան զոյգ հարան եւ զողացին: Ի միարանութիւն եկեալ՝ ելաւ իրացն ինդրեցին: Մի այդպէս, ասեն, տաղնապիր յանձն քո, ով քաջ, կանուխ է մոլորութիւնս մեր քան զճշմարտութիւն նորա: Տկար զազանաւն առաջին մարդոյն յաղթեցեր. մեծ թաղաւորան տղայոցն չկարե՞ս կալ առաջի:

17. Զայս ասացին եւ զհամատարած ծովն շարժեցին (ի վերայ քո). իջին ի նա օղբ մըրբրկածին, շարժեցին եւ յուղեցին զբազմութիւն արեւաց նորա: Սկսաւ մրմուռել, ելանել, տարածանել, ապականել զղաշտս եւ զլերինս:

18. Եկն եհաս ի վերայ քո միանգամայն բազմութիւն ազգաց հեթանոսաց, ահաւոր զազանօք, խանադործ նշանօք, բազմաձայն փողովք, գալարափող զոչմամբ, անտառախիտ նեղակօք, ճառագայթաւոր սուսերօք, ոսկեկմրեայ վահանօք, թանձր եւ ստուար մկնդակօք:

19. Հողեղէնք զհողեղէնսդ երկեցուցանէին. ապականացուքն զանապականսդ կամէին կորուսանել. եւ անաստուածքն զաստուածային շառաւեղ կամէին յարմատոցն կտրել: Երկիցս եւ երկցս պարտեցան եւ ոչ ամաչեցին:

20. Իսկ այն, որ նստի յերկնից յերկինս եւ տեսանէ զաշխարհս ամենայն յականելով եւ կռելով զբարի օրէնս եւ որ ընդդէմ իցեն, ետես զքեզ միայն օրինաւոր. թոյլ ետ պատել շուրջ զքեւ աստիկ հնոցին. վատեցան, բորբոքեցան եւ սպրեցան իբրեւ զփուշք ի մէջ հրոյ: Նմանեցար երկից մանկանցն ի հնոցին. զգորութիւն հրոյն շիջուցեր, զխոշորութիւն կայծականցն ի կակղութիւն վարդի փոխեցեր եւ զմղձկութիւն ծխոյն ի սպիտակութիւն շուշանի շրջեցեր. զայրեցող բնութիւն հրոյն յարարող զօրութիւն սովորեցուցեր. զեր-

րորդն Աստուծոյ յերկնից յերկիր ածեր քեզ յօղնականութիւն:

21. Իմաստունքն նոցա յիմարեցան, քաջքն նոցա վատեցան, սպառնալիքն նոցա դադարեցան, նահատակք նոցա զօղեցան, բազմութիւնք սակաւացան:

22. Երանի քեզ եւ երանի որ մերձ իցեն առ քեզ: Սակաւ էիր թուով եւ անթիւ եղեր բազմութեամբք. սակաւ էիր յայտնեօք եւ անթիւ եղեր անյայտնեօք:

23. Նիզակ քո նիզակ Յեսուայ եւ սպառազինութիւնք քո սպառազինութիւն սպարապետին Աստուծոյ, որ իջանէ ընդ նմա յաւուրն յարութեան նորա. ձայն որ գերկիր շարժէ, զվէմս զղրղէ, զգերեզմանս աւերէ, զմեռեալս յարուցանէ, զհնացեալսն նորոգէ, զզատաստանս հատուցանէ. ոմանք ի ձախակողմն եւ ոմանք ի յաջակողմն: Այս Աստուծոյ միայն եւ նմա վայելէ. իսկ քեզ իբրեւ հաւատարիմ ծառայի եւ սիրելոյ եւ ժառանգաւորի արքայութեան՝ եւ շնորհս երկնաւորս, զի գաւուրն բերէ նմանութիւն:

24. Որ պարծէր ի չարն՝ տաղնապեցաւ, որ խիզախէր ի մոլորութիւնն՝ յիմարեցաւ: Ամենայն ինչ քո զնդին կրկին է, եթէ զրահ[իւ]ք էին պահապանք մարմնոյ, ընդ նմին զրահք հաւատոյ, եթէ սաղաւարտ էր ի զգուշութիւն սուսերի, ընդ նմին էր եւ սաղաւարտ փրկութեան. եթէ վահան ունէիր ընդ գիմահար լանջացդ առաքինեաց, ընդ նմին ունէիր զվահան հաւատոյ համբերութեան. թէ նեա ի կորովից քոց թուչէր ուղղակի, ընդ նմին եւ աղօթք սուրբք խնդրուածոց քոց վաղվազակի գեր ի վերոյ գտանէին քան զերկինս առաջի Աստուծոյ. եթէ շողայր սուսեր ի բազուկսդ առաքինիս, լուսաւորութիւն հաւատոց քոց ի մէջ հրեշտակաց փայլատալուսն արձակէր. զբօշակք զբօշակք երկնաւորք եւ տէգ նիզակի քո ճառագայթաւորքք իբրեւ զլար արծաթոյ արեգական:

25. Այս է, որ զահի հարեալ էի ի սկզբանէ պատմութեան, եթէ զիսբոզ կարացից բանիւ պատմել զայնմանէ, որ ի վեր քան զբանն գտանի. բանս չորեքնիւթէ այս աշխարհս ոչ ասել:

26. < ||| ոչ ունիմ գիտութիւն յաղթատութեանս իմոյ կազմութեանս, պատրաստութեանս, զի եւ ոչ նիւթ ինչ ճարտարեալ իմաստութեան համբերեալ՝ կարացից կկել զգեստ ինչ զօլութեան քում ազնուականութեանդ: Մանաւանդ եթէ ամենայն հոգեւոր

րական փրկիսփայլքն աշխարհին Յունաց ի մի տեղի գումարեցին, եւ ոչ ինչ կարացեն ասել զարժանն [զօլութեան քում հոգեկից յաղթութեանդ]: >

27. Եւ այս վիճակ ոչ ամենեցուն, այլ որք քաջապէս գեղերեցան յուսումնասիրութեան ի թուականին, յերկրաչափականին, յաստեղաբաշխականին, ի բժշկականին եւ ապա ի ծայրս ծագաց հասին ի մարգարէականն, յառաքելականն, յաւետարանականն, որ է սկիզբն եւ ընծիւղումն: Եւ թէպէտ ունէի զայս ամենայն արհեստս նիւթականաց պատմող, եւ էիր դու եւս երբեմն նիւթական, այլ զաննիւթոցն ունիս նմանութիւն:

28. Ընդ Արուսեակին կշռեցիք զքեզ. դու պայծառագոյն քան զարուսեակն նշոյլս արձակես: Արուսեակն զվեց ամիս արուսեակ է եւ զվեց ամիս զիշերալար. դու աւուր աւուր արուսեակ եւ ի վեր քան զարուսեակ: < Արուսեակ > յայգուն պահի եւթ երեւի, իսկ դու ի քսան եւ ի չորս ժամս՝ ի տունջեան եւ ի գիշերի:

29. Եւ եթէ զլուսին ամից քեզ յօրինակ, յոյժ ծիծաղելի է իմաստնոց. երկոտասան անգամ ի տարւոջն վիժամ, ժանդահար, մանդաղաձեւ, կիսադունդ, խոնաւալից, կիսալոյս, հիւանդոտ, գիշերազնաց, խաւարասէր, լուսատեաց, ջղջկանման, պակասութեաց, հրատանջ, բազում անգամ ի թաղուստ մտեալ. իսկ դու լիայայն, բարձր, լուսասարաս, աւետարեր, հրեշտակակերպ, ուրախարար, քաջալերիչ, պայծառ, գեղեցիկ քան զամենայն հասակակից ընկերս քո:

30. Ոչ ինչ բաւական քեզ բաւեմ ասել, որ քան զԱրեգակն ի վեր գտանիս. ոչ զնա թշնամանեցից եւ զքեզ գովեցից, այլ զընտրութիւն նորա պատմեցից քեզ. շեղազնաց, թիւբընթաց, կողմնաւոր, ստուերաշուք, հարաւարնակ, ձմեռնատանջ, ամառնակէզ, թօնուտ գարնանի եւ աշնուշ աշնանի, զիշերակուլ, առաւօտածին, ծաղկաթարշամ, գարարացամաք. կենդանահալած ի ստուրս ի մէջ առօրէի եւ կիսարածին աւուրն ողջունի: Յիբաւի ոմա Յոյնք Ապոլոնի կարդացին: Եւ ապա եթէ զգուզնաքեաց ճառագայթն անցես զմտօքդ, ընդ նմին եւ զայն զիտառալի, (զի) գիշերաւ է ծածկեալ, ամպովք է թագուցեալ, փոշուով մղղացեալ, մրրիօք ալեկոծեալ:

31. Դու արեգական նմանեցեր, ի Հօրէ զօրացար, ի յՈրդւոյ քաջալերեցար, ի սուրբ

Հոգւոյն լուսաւորեցար: Ի գիշերի տեսանիս եւ ի տունջեան թափ անցանեն ճառագայթք հաւատոց քոց: Ասացից քեզ բան ինչ առակաւոր. Յամենայն կողմանց քաջացար, սրատեսիլ ես քան զարծուի, երազալուր քան զմի ի հանդրափանց: Ոչ միայն գերկինս տեսեր, այլ եւ զերկնից մեծն տեսեր եւ զփօքն թղեր. զանցաւորս ետուր եւ զանանցն առեր:

32. Ի բաց ընկեցեր գոսկիակուր քագաւորութիւն, եւ ահա կայ պահի քեզ անձեռագործ պսակն, զոր ընդունելոց ես յամենաւորք ձեռացն Քրիստոսի: Որ քողցէ վասն աւետարանին գիայր եւ զմայր եւ գխարս եւ գեղարս եւ զամենայն ստացուածս իւր, գիարիւրապատիկն աստէն ընկալցի եւ զկեանս յախտեցից յաշխարհին, որ ոչն անցանէ: Զայդ աղքատի ումեք դիւրագոյն է առնել, իսկ առն քագաւորի իբրեւ գեթ, անհնար է: Ապա եթէ արասցէ ոք, որպէս եւ արարերդ, մարդկան անհաւատալի (է) եւ հրեշտակաց զարմանալի, (նաեւ) Աստուծոյ մամնելի, ոչպէս քողցալ զանթիւ բազում գօրս հրեշտակաց՝ եւ եկն ի գծուծ կերպարանս մարդկան:

33. Գտաւ քո զօրծղ այնմ անմահն. նա եւ ընտր աշխարհից, բացեր դուսն ողորմութեան. (ի) քոյն իսկ յաշխարհի հայրենի հաւատքն պահեցան, եկեղեցիքն շէն մնացին, վկայարանք (ի) խաղաղութեան, քահանայք ի քահանայութեան, պատարաք ի սեղանս, մարգարէք յընթերցուածս, առաքեալք ի միթիթարութիւնս, սաղմոսերգուք ի յօրհնութիւնս, կուսանք ի կուսութեան, կնքաւորք ի սրբութեան եւ ամենայն ոք յերաքանչիւր կարգի:

34. Եհաս լուր առաքինութեան քո յարեւելից մինչեւ ի Գաղերովն, ի հարաւոյ մինչեւ ի հիւսիսի: Գրեցաւ անուն մարտիրոսութեան քո յոսկի տախտական ընդ առաքեալսն եւ ընդ նախալկայսն, ընդ հայրապետսն եւ ընդ եպիսկոպոսսն, միանշամայն եւ ի զպրութեան կենացն եւ ի յերկինս:

35. Զոյշ լիւր, սքանչելի, որ այսքան մեծամեծացն արժանի եղեր եւ յայսչափ բարձրութիւնս վերացար հասեր: Հաստատուն կաց ի յոյսն եւ անհատ ի սիրոյն, համբերող լիւր ի հաւատս ճշմարտութեան, զի մի վիշապն մեռեալ գտուտն շարժեցէ ի վերայ կենացս մերոց. զի թէ մինչ տղայն էիր՝ յաղթեցեր նմա, ի չափ հասեալ՝ գիտեմ թէ առոտն կոխեր զամենայն մեքենացս չարի նորա:

36. Այլ որչափ միտք զքեզ սիրեն եւ մարթ էր զայն ընդ բանիւ ընդ պատմութեամբ արկանել, բազում մագաղաթի ծախք լինէին:

37. < Եւ գումարեալ գրանս իմ ի մի տեղի խօսեցայց. եւ եթէ էիր մարդ եւ եղեր հրեշտակ, ունէիր ազգականս ի յերկրի եւ զտար եղբայր Քրիստոսի ի յերկինս. էիր մահկանացու եւ եղեր անմահ. ոչ թէ դու միայն ես անմահ, այլ վասն զի համարձակութիւն ունիս առ Քրիստոս, որ բազում մահկանացուաց կարէ տալ զկենդանութիւն: Յանկալի ես հրեշտակաց, փափագելի ես մարդկան, առաւել ցանկալի ինձ հեռացելոյս ի չլինելոյս մարտակից քեզ յաներեւոյթ պատերազմին ամենաշար ստանայի: Բայց արդ աղաչեմ (եւ) փարելի ասեմ, չունել վնաս ի մտի (եւ) չլիշել զիմ հեղգութիւն: Զի այն որ արարն զքեզ իմում որդեկրութեան արժանի, եոյն եւ շնորհեցէ մեզ զքեզ առողջ հոգեով եւ մարմնով տեսանել յաշխարհի եւ վայելել ի քո շնորհալից վարսդ առաքինութեան: Ողջ լինելով ի Քրիստոս՝ լիցիս մեզ բազում ժամանակս պարապեալ եւ լցեալ սիրովն Քրիստոսի. ամէն: >

38. Բազում անգամ յառաջ ելի վասն քո սիրոյն գալ առ քեզ. եւ այժմ ի մերմէ բարեխօսութեմ եւ յամենայն սուրբ ուխտի եկեղեցոյ յանձն արարեալ զքեզ Հոգւոյն սրբոյ՝ Տէր ընդ քեզ. ամէն:

Վերլուծում:  
1. Բ. թուողին մէջ ունինք տեղիքս. «բայց արդ զքեզ ի հաւան անեալ քոյով ժուժկալութեամբդ՝ աղաչեմ զի ախորժ եւ անոյշ իմ ողջոյնս քեզ թուեցիք»: Զեմ կրնար վստահարար ըսել թէ գրութեանս այս սկսուածքը եղիչէին հարագա՞տ է. եւ տեղիքս ա՞յս սկսուածքը կ'ակնարկէ:

2. «Ի ճառս սուրբ սիրոյ քո առաքինութեան ի կամս կամաց անձին իմոյ բղիսեցին միտք իմ երկնաւոր զօրութեամբն». այս շարադրութեամբ անիմաստ է: Եթէ նկատենք պարբերութիւնս սկզբնաւորութիւնն եղիչէի ճառերուն, այսինքն Պատմութեան վերջաբանին եւ համեմատութեան զննք Նախաբանին հետ, կը ստանանք մանր սրբագրութիւններով հետեւեալը. «Զճառսս (զայստսիկ) ի սուրբ սիրոյ քոյոյ հրամանիդ եւ ոչ ի կամս կամաց անձին իմոյ բղիսեցին միտք իմ երկնաւոր զօրութեամբ» կամ շնորհօք: Նախարանին մէջ կ'ըսուի. «հայեցեալ ի սուրբ սէր քոյոյ հրամանիդ» (6), «ընկալաք զհրա-

ման պատուիրանի յաննախանձ քոց բարուց  
 րնութեանդ... ոչ ըստ կամաց... ճառա-  
 գրեմք»։ Ուստի «քո առաքինութեան» նախ-  
 նարար ըլլալու էր «քոյոյ հրամանիդ»։ Այս-  
 պէս նաև «յօթարեցի պատմող լինել բանիւ»  
 նկատելու է յարատուութիւն մը նախաբանին.  
 «զոր եւ մեք ըստ հրամանի քու՛մ ընկալեալ  
 յօթարութեամբ ձեռնարկեցաք զայն ինչ...»։

3. «Բայց եթէ տէր Յիսուս ձեռն կառ-  
 կառուցու յօգնականութիւն, յայս սակաւս  
 քաջալերեցայց...»։ Հմմտ. նախաբանին տե-  
 դեքս. «Եւ ա՛հա վերաբերիմք ընդ քեզ ճախ-  
 րելով... փոքր ի շատէ ծծելով յանապական  
 վերին օղոցն՝ առնուցումք զգիտութիւն ի  
 փրկութիւն անձանց» (6)։ Հմմտ. նաև  
 Եղիշէ, Բ. յեղ., էջ 121. «Տէր Յիսուս...  
 կարկառեալ զամենագոր աջդ յօգնականու-  
 թիւն»։

«Բան ունիմ մտաց գործի»։ Եղիշէի  
 ծննդական մտքի մէկ արտայայտութիւնն է  
 (Հմմտ. Հանդ. Ամս. 1950, էջ 404—6 եւ Եղի-  
 շէ, Գ., էջ 360—361)։ «Գտից ինչ հիւթանիւթ  
 ի հոգեկիր յառաքինութենէ արանց քաջաց».  
 Բառս «հիւթանիւթ» կիրարկած է Եղիշէ նաև  
 Դատաւորաց գրքի մեկնութեան մէջ. «Թո-  
 ղեալ զհիւթանիւթ մամոնային» (էջ 180)։  
 «Հոգեկիր» անվանը կ'ենթադրէ «արանց  
 քաջաց»։ Ուստի «յառաքինութենէ» կամ յա-  
 լելուած մըն է խմբագրին եւ կամ տեղա-  
 փոխուած է. «յառաքինութենէ (խմբագր «յա-  
 ռաքինութեանց) հոգեկիր արանց քաջաց»։  
 Կը թուի թէ Եղիշէ հոս Կորինթի նախաբանին  
 ազդեցութեան տակ է։

4. Այս հատուածը կ'երեւայ թէ աղ-  
 ճատում կրած է. կը կարգամ «արդ յայն  
 (Չ. ա՛հա), յորմէ երկուցեալն էի ի կեանս  
 (ի կամս), սիրով (Չ. սիրոյ) մօտիմ...»։  
 Էմինեան ունի. «արդ ա՛հա յորմէ երկուցեալ  
 էի՝ ի ձեռն սիրոյ մօտիմ»։ Շարունակու-  
 թիւնը «եւ սկսանիմ ուստի արժանն է սկսա-  
 նելը»։ այսպէս նաև նախաբանին մէջ. «արդ  
 ... սկսուք ուստի արժանէ սկսանել (էջ 6)։

5—14 խմբագրին գրչէն է։ Ուշագրու-  
 թեան արժանի է «ի նախնայն ձերում», «թա-  
 զաւորն ձեր» եւ այլն։ «Գայր հասանէր  
 (Ուսնայր յաշխարհն Հայոց», եւ «Եկն Ուս-  
 նայր արքայ Եմուտ յաշխարհն Աղուանից...  
 հալածեցան զեւք աշխարհի... նաև զհոգ  
 երկրին եւս ի նոյն վիճակեցայց... կալաւ  
 կարգ ուղղութեան առ նախնեօքն ձերով...  
 մինչև ի ժամանակս էն սքանչելի տէրու-

թեանդ»։ այս տեղիքները շատ անկանոն քե-  
 րականութեամբ ներկայացուած են։ Եթէ  
 «Գիւտ եպիսկոպոս» Հայաստանէն կը գրէր,  
 պիտի ըսէր. գայր... յաշխարհս. «եմուտ  
 յաշխարհդ Աղուանից»։ առ նախնեօքն քով  
 եւ այլն։

Խմբագրի ձեռքի տակ ունեցած է Ագա-  
 թանդեղոսը. ասկէ փոխ առած է «սկայագոր  
 թաղաւորը» (Ագ. 108)։ Եղիշէի Բ. յեղանա-  
 կէն առնուած կ'երեւայ § 6 «Ոչ դլաց եւ ոչ  
 դաղարեաց»։ Հմմտ. Եղիշէ, էջ 144. «մի  
 դլար մի դաղարեք» (Բ. Մակար. ԺԲ. 2.  
 «ամենեկին ոչ տային դլալ եւ դաղարել նո-  
 ցա»)։

Ըստ ուղիղ ժամանակագրութեան Տրդատ  
 Բ. թաղաւորած է 217—253 տարիներուն.  
 իսկ աւանդութեան համաձայն 287—336.  
 վերջնայն կը հետեւի Աղուանից պատմագիրը։  
 «Ուսնայր արքայ Աղուանից պատմութեան  
 մէջ կը յիշուի 369ին (Փաւստ. Ե. 4. Մ. Խոր.  
 Գ. 37. Մ. Դասխուր. 13)։ Թէ ի՞նչ ժամա-  
 նակագրութեան հետեւելով Աղուանից պատ-  
 մագիրը այդ Ուսնայրը Տրդատի ժամանակա-  
 կից դրած է, թէ հոս եւ թէ Ա. 9, անմեկ-  
 նելի է ինձ։ Եթէ գիտակից ըլլար ժամանակի  
 անհամաձայնութեան, վստահ եմ, թէ պիտի  
 չվարանէր թաղաւորաց ցանկին մէջ նշանա-  
 կել Ուսնայր Ա. եւ Բ.։

Թ. 13 եւ 14 հատուածները կը թուի ինձ,  
 թէ կը պարունակեն ինչ ինչ Եղիշէի գրչէն։  
 Թ. 3 հատուածին համաձայն Եղիշէ արա-  
 մագիր էր «հոգեկիր... արանց քաջաց»  
 կեանքէն «հիւթանիւթ» ծագկաքաղ հանել։  
 Պատմութիւնը Ագաթանդեղոսի, Փաւստոսի  
 եւ Դ. Փարպեցւոյ քով կարող էր իրեն «ա-  
 րանց քաջաց» սքանչելի գէմքեր ընծայել,  
 սկսեալ Արտաւազդ Մամիկոնեանէն, Ս. Գրի-  
 ղորի եւ Տրդատի օրերէն։ Գծրախտարար  
 այս տեղիքները յայտուած են, Ուսնայրի  
 վրայ դարձնելու համար պատմութեան ըն-  
 թացքը։

8—10, 13—14 հատուածները կը կաղ-  
 մէին նախնարար Ա. 14 գլուխին մասեր.  
 ապա հանուելով անկէ դետեղուած են այս  
 Թուղթին մէջ պատշաճ բաժանումներով եւ  
 փոփոխութիւններով։ Ա. 14ի հեղինակը հե-  
 տեղողութեամբ Ագաթանդեղոսի պատմած է  
 Հայոց դարձի պատմութիւնը մինչև Վրթա-  
 նէսի եպիսկոպոսութիւնը (առանց Արիստա-  
 կէսի յիշատակութեան)։ Այժմ Հոփոսիմեանց  
 նշխարաց ամփոփումը եւ գետեղումը պատ-

մուկէ կտքը, կ'ընդհատի շարունակութիւնը.  
 այսինքն Տրդատի բժշկութիւնը, ապաշխա-  
 րութիւնը, մկրտութիւնը եւն. եւ ոստումով  
 կը յիշատակուի Գրիգորի եպիսկոպոս օծուելը։  
 Այս պակաս մասերը հանուած եւ աղուցուած  
 են Ա. Թուղթի մէջ, եւ են 8—10 եւ 13—14։  
 Ասոնց դասաւորումը Ա. 14ի մէջ դիւրին  
 պիտի ըլլայ, եթէ հետեւինք Ագաթանդեղոսի  
 կարգին. այս ինքն Թ. 8, 9. ապա Գրիգորի  
 եպիսկոպոսութիւնը, Թ. 10, 12, 13, 14,  
 Վրթանէս. ի հարկէ փոփոխելով փոփո-  
 խուածները։

11. Այս հատուածը, որ ծանօթ եղած է  
 նաև Անանիա կաթողիկոսին, կը պատկանի  
 խմբագրի գրչին։ Աղուանից Պատմութեան  
 վերջին խմբագիրը անտեսած է տեղիքս Ա. 9  
 գլխուն մէջ։ Չարմանալի կը մնայ միշտ, թէ  
 ինչու անուն չէ տրուած այս ի քմաց հնա-  
 րուած Հոսմէն եկած եպիսկոպոսին, որ  
 Աղուանից հովիւ շնորհուած էր Տրդատէն եւ  
 Ս. Գրիգորէն. ուստի Ս. Գրիգորիսէն յա-  
 ուջ։

14. Տեղիքս «եւ հաստատեալ կալաւ  
 կարգ ուղղութեան առ նախնեօքն քով (Չ.  
 ձերովք)՝ հանեօք եւ հարքն քով երանե-  
 յեալ մինչև ի ժամանակս քո սքանչելի տէ-  
 րութիւնդ», առանց տարակուսի խանդա-  
 րուած է եւ կը պատկանէր սկզբնարար Եղի-  
 շէի։ «Հանեօք», եղ. ուղղ. հանի, «մայր հօր  
 կամ մօր», չէր կրնար «նախնեաց» ազգա-  
 ծառին մէջ տեղ գտած ըլլալ, պէտք է ըլլար  
 «հաւուք»։ Եղիշէի սիրելի էր նախնիքն մե-  
 շել հաւով եւ հարց հաւով. այսպէս. «որ էր  
 հայր հաւուն քոյ» (34). «հարքն մեր եւ հաւքն  
 հարցն» (34). «թոռուք... հաւուք» (40),  
 «զհարց եւ զհաւուք» (108)։ Ուստի այս տեղ  
 նախնարար եղած պիտի ըլլար. «առ նախ-  
 նեօքն քոյովք, հաւուք հարցն եւ հաւուն եւ  
 հարքն քոյով երանելեալ»։ Վեց սերունդ,  
 որով Վարդան (իրը 600ին) ըստ աւանդու-  
 թեան կ'ուեննար իր նախնիքն յանձին Արտա-  
 վազդի (իրը 300ին) Տրդատի եւ Ս. Գրիգորի  
 օրով։

15. «Վիշապն, որ հինն էր յաւուրցն ա-  
 ուջին մարդոյն, ետես զքննաղ ծնունդ քոյոյ  
 րնութեանդ յառաջին ի հայրենի հաւատոցն...  
 յոյժ կասկած ի միտս անկա... եթէ դուցէ  
 ընդ որ եղև մուտ կենաց յաշխարհս Արեւե-  
 լից...»։ Բնագիրը շատ խանդարուած կ'երե-  
 ւայ։ Ինչպէս յաջորդ հատուածէն կը տես-  
 նուի, միտքն է. ինչպէս որ քրիստոնէու-

թիւնը մուտ գտաւ Հայաստան Տրդատ թա-  
 զաւորի օրով, նոյնպէս կարող է այն մեր-  
 ժուիլ երկրէն ի ձեռն երկրորդ գոռոզ թա-  
 զաւորին, Խոսրով Ա. Անուշըռուանին, որ  
 տէրն է աշխարհին։ Տագալի օրինակներու  
 մէջ կամայական փոփոխութեանց ենթար-  
 կուած է այս հատուածը։

16—24 հատուածներու մէջ Եղիշէն է,  
 որ կը բարբառի, անոր ողին է, որ կ'ար-  
 տայայտուի։ Հակիրճ ակնարկով կը վեր-  
 յիշեցնէ իր հերոսին 570—573 տարիներու  
 անցքերը, որոնց ընդարձակ նկարագրու-  
 թիւնը տուած էր իր Պատմութեան մէջ։ Յա-  
 ուջ կը բերեմ իր Պատմութեան տեղիքներս.  
 «Զի՞նչ հատուցուք մեք աստուածոցն փո-  
 խարէնս այս մեծի յաղթութեանս... Յայնմ  
 ժամանակի առ հասարակ միաբան մոզք եւ  
 քաղեայք բարձին զձայնս իւրեանց եւ ասեն.  
 Աստուածքն... ոչինչ են կարօտ խնդրել ի  
 քէն... այլ զի բարձրես զամենայն ուսմունս  
 մոլորութեան մարդկան եւ ի մի դարձուս-  
 ցես օրէնս զբաղաշտական պատուիրանին։  
 Հաճոյ թուեցաւ բանն առաջի թագաւորին եւ  
 ամենայն մեծամեծացն...։ Որհնուրդ ի մէջ  
 տեալ՝ յաղթէր խրատն» (16)։ «Սկսաւ եղ-  
 ջիւր անել անօրէնութեամբ, եւ գոռալով  
 հոգին հանէր ընդ շորս կողմանս երկրի...  
 Ենդէր տագնապէր անխաղաղասէր կենօք...»  
 (էջ 7)։ «Կամէր հրդեհել զլիւրինս եւ զզաշտս  
 առ հասարակ... մերթ շանթէր, գալարէր  
 իրեւ զօձ թիւնաւոր, մերթ պարզէր գոչէր  
 իրեւ զառիւժ զայրացեալ, զելոյր, զլորէր,  
 տապալէր» (14). «Իրեւ զշարաղեւ մի՝ ոչ  
 եւս դաղարէր յուզել, շարժել զրուք ձմե-  
 րանոյն... նմանեալ իսկ էր ծովածուփ ալե-  
 կոժ խոտութեան... անդտին յանդնոց  
 բարձրանալ, փրփրել, կուտկել վիշապա-  
 ձայն որոտալով, զազանարար գոչելով...  
 որպէս փլեալ (սփռեալ) տարածանիցի համա-  
 տարած ամենայն ի վերայ լեռանց, խորոց,  
 ձորոց, ապականել միանգամայն զլայնութիւն  
 դաշտացն վայելչութեան։ Մոնչելով բարբառ  
 արձակեալ եւ ասէ...» (34)։ «Ի գունդս  
 գունդս զզազանան բաժանէր... նշանա բաշ-  
 խէր, դրօշս արձակէր. եւ ի՛ ձայն մեծի  
 փողոյն պատրաստ հրամայէր լինել. իսկ  
 զգունդս... ի մի վայր ժողովէր... ի ճօճել  
 բազմախուռն նիզակացն... թանձրամիտքն  
 յիմարէին... քաջքն խիզախէին... ի ձայն  
 մեծ զալարափողոյն... եւ որք մնացեալքն

էին վատնակը եւ ցրուակը լինէին» (89—92) եւ այլն:

«Երկիցս եւ երիցս պարտեցան». կ'ակնարկէ 571—573 տարիներու ընդհարումները. համառ. Եղիշէ. «Երկիցս եւ երիցս զփորձ առեալ կշտամբեցաւ» (66). «յերկուս եւ յերիս կռիւս Տէր ինքնին մեծաւ զօրութեամբ օգնեաց մեզ» (79):

25. «Այս է, որ գահի հարեալ էի ի սկզբանէ պատմութեան». կ'ակնարկէ Թ. 2 եւ 4 հատուածները: «Ի սկզբանէ» ուղղելու է անշուշտ «ի սկզբանս»: Բնագիրը այս տեղաւ աղճատուած է:

26. Այս հատուածը առնուած է Բ. Թուղթէն. կը համարիմ թէ նախարար այս տեղ կը գտնուէր, փոփոխելով փոփոխուածները: Չեռագրին «զի եւ ոչ նիւթ ինչ ճարտարեալ իմաստութեան համբերեալ կարացից կրկնեալ զգեստ ինչ գովութեան» էմին ուղղած է «իմաստութեամբ համբերել կարացից ի կկել զգգեստ գովութեան». իսկ Շահնազարեան «իմաստութեան իմ համբարեալ կարացից կկել զգգեստ ինչ գովութեան»: «Կկել զգգեստ» ուղղուած է անշուշտ յեցած Ազաթ., Վարդապ., էջ 140 «մինն (ի բուսոց) զգգեստ կկէ, գունակ գունակ ծաղիօք զերկիր զարդարէ ի գունազոյն երանգս». որ կը պատշաճի ճշգրտ. այս դէպքին հարկ է «համբերել» կարգալ «համբարեալ»:

27. «Բանս չորեքնիւթեայ», զոր տեսանք Թ. 25ի մէջ, հաւանօրէն աղերս մ'ունի այս հատուածին հետ: Այս տեղ Եղիշէ կը խոստովանի թէ «ունի» թուական, երկրաչափական, աստեղագիտական եւ բժշկական արհեստներու գիտութիւնը, անոնց կից նաեւ սուրբ-գրեանական ուսմանց հմտութիւնը: Այս արուեստները Հայաստան բերաւ առաջին անգամ Անանիա Շիրակացի. եւ հաւանական է մտածել, թէ Եղիշէ աշակերտած ըլլայ Անանիայի, ինչպէս այլուր ուշադիր ըրած էի (Եղիշէ վարդապետ, Գ., էջ 349—351): Աստղագիտական արհեստին ծանօթութիւնը ցոյց տուած էր Եղիշէ իր Պատմութեան Բ. յեղանակին մէջ (էջ 129—130), ուր կը խօսի Արեգակի մասին: Նաեւ այս տեղ, Թ. 28—31, կը ճառէ հմտօրէն Արուսեակի, Լուսնի եւ Արեգակի մասին. իսկ Վարդապետութեան մէջ կը գրէ խօսելով առաքեալներու մասին. «Իսկ արդ ո՞ւմ նմանեցուցից կամ զո՞վ ամէրց տարացոյց. եթէ գամպս ասեմ... եւ եթէ զլուսին ասացից, լուսին ըսու եւ պակասի... եթէ

զաստեղս ասացից, ոչ մի փառս ունին, եւ ոչ միով պայծառութեամբ երեւին. այլ ոմն յուրով եւ ոմն սակաւ, ոմն արուսեակ եւ ոմն գիշերավար...: Աստեղք ոմն ի վեր, ոմն ի վայր, ոմն ի միջի...: Արեգակն իշխանութիւն ունի առուր տուրնջեան...» (էջ 349—350): Նաեւ այս տեղ, Թ. 28—31, կը ճառէ հմտօրէն Արուսեակի, Լուսնի եւ Արեգակի յատկութիւններու մասին, ուր յայտնապէս կը տեսնուի, թէ ան ծանօթ է Անանիայի Տիեզերագրութեան (համառ. Լուսնի եւ Արեգակի մասին՝ Անանիայ Շիրակուհու Մնացորդք բանից, Պետերբուրգ 1877, էջ 49—62):

34. «Եհաս լուր առաքինութեան քո յԱրեւելից մինչեւ ի Գաղերոջն (Չ. Գաղաբոջն), ի հարաւոյ մինչեւ ի հիւսիս»: Եղիշէ (էջ 55) առ Յուստինոս կայսր գրուած Թղթին մէջ ունէր տեղեքս. «ունելով զԵւրոպէ՝ անցին եւ տիրեցին եւ Ասիացուցն ի սահմանացն Սեթայ (տպ. Սերայ) մինչեւ ի կողմանս Գաղերոջն», այս ինքն «ի կողմանս հարաւոյ»: Երկու դէպքին ալ նկատի առնուած է Հիւրդիտոսի Ժամանակագրութիւնը, ուսկից է. «յիսիսիւրոյ մինչեւ ի Գաղերոջն կողմն հարաւոյ» (Անանուս Ժամանակագրութիւն, էջ 4. համառ. Ակինեան, Եղիշէ, Գ., էջ 67 եւ 388):

«Գրեցաւ անուն մարտիրոսութեան քո յոսկի տախտական ընդ առաքեալսն եւ ընդ նախալկայսն, ընդ հայրապետս եւ ընդ եպիսկոպոսն, միանգամայն եւ ի դպրութեան կենացն եւ ի յերկինս»:

«Ոսկի տախտակք» այն երկփեղկ տախտակներն յն. τὸ διπτυχάων, diptyques, Diptychen) են, որոնց վրայ կը գրէր հին Եկեղեցին իր եպիսկոպոսներու, կենդանի եւ հանդուցեալ բարերարներու, մարտիրոսներու եւ խոստովանողներու անունները եւ կը յէշր գանոնք սուրբ պատարագի Ժամանակ պատարագի կողմէ, թելադրութեամբ սարկապէս<sup>1</sup>: Դիպտիքոնները կ'ըլլային փայտեայ, մետաղեայ (ոսկի, արծաթ), նաեւ մագաղաթեայ<sup>2</sup>: Եղիշէ հոս «Ոսկի տախտակք» կը կոչէ գայն, այլուր նաեւ «Յիշատակարան» եւ «Բնագիրք»: Ունիք վկայութիւններս. Փաւստոս Գ. 11. «Յորժամ գա-

<sup>1</sup> Համառ. «Առաքելոց սրբոց...» քարոզին մէջ. «... եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս աղաչեմք» (Գաթրքեան, Սրբազան Պատարագամտոյցը Հայոց, էջ 688—693):  
<sup>2</sup> Dippel, Diptychen: Kirchenlexikon, 3. (1884 Freiburg) 1813—1817.

նուանս Սրբոցն կարգիցեն»: Գ. Փարպ. 5. Աղան Արծրունի «եղեալ ի Մատրանն ի Հաղամակերտի. որոյ յիշատակարանն ընդ անուանս վկայիցն սրբոց պատմեալ քարոզի մինչեւ ցայսօր»: Եղիշէ. «Բնագրօք յիշատատակեցան նոքա (նախարարք կապեալք) եւ ոչ մի տօնք տարեկանաց ոչ ամին զնոսա ի հեռաստանէ» (158): «Ոչ յիշեցաւ անուն նորա (Վասակայ) ի մէջ Սրբոց եւ ոչ մատեալ յիշատակ նորա առաջի սուրբ սեղանոյն յեկեղեցոջն» (109)<sup>3</sup>: Այսպէս նաեւ 571ի կռուին մասնակիցներու անունները արձանագրուած են իրրեւ յիշելի Յայտնութեան տօնին. «Ամենայն եպիսկոպոսունք եւ երեցունք պատուէր հրամանի տուեալ աշխարհին... զտօն պատերազմացն յաղթութեան խառնել ի սուրբ տօն Յայտնութեանն Քրիստոսի, զի անխափան կացցէ մեծ յիշատակարանս այս ընդ աստուածային անանց տօնին» (62): Բաց աստի Եղիշէ կը գրէ ճառօրէն զրուստիքը զօրավարի մը, որ թէեւ չէ նահատակուած, բայց ընդունած է նահատակի պսակը իր առաքինի վարքովը, «քանզի բազմադիմի է նահատակութեանդ անուն» (Նախարան, 6):

32. Ուշադրութեան արժանի է հոս կոչուած Մատթէի Աւետարանին ԺԹ. 29էն. որուն մասին ակնարկութիւն ըրինք վերագոյն: Յայտնապէս «Վաչէի» հրատարակման յաշխարհէ կ'ակնարկէ:

37. Այս հատուածը առնուած է Բ. Թուղթէն: Տեղոյս կը վերաբերի, փոփոխելով փոփոխուածները: Չեռագրին «արդ աղաչեմ փոխանակ ասեմ» ուղղեցի «եւ փարեի ասեմ». փոխառութիւն մըն է Գասականներէ. համառ. Ոսկ. Մատթ. Ա. 168 «այլ աղաչեմ եւ փարելի ասեմ». նոյնպէս Ոսկ. Պաւլ. Ա. 652, 714 եւ այլն:

Մեր քննութիւնը կը յանգի կորակացութեանս.

ա. Գիւտ եպիսկոպոսի երկու թուղթերը կեղծիք են:

բ. Թուղթերու խմբագիրը տրամադրութեան տակ ունեցած է Եղիշէի Հայոց պատերազմի Պատմութեան վերջարանը:

գ. Այն ճարտասանական նախակրթութիւն մըն է, գրուած Եղիշէէն:

<sup>3</sup> Համառ. Հ. Յ. Գաթրքեան, անդ, էջ 102, ծան. 3:

(Շարունակելի:)

ՄԸՏԹԷՈՍ ՈՒՌՀՇՅԵԹ\*

Մատթէոսի Ժամանակագրութիւնը կը բաժնուի երեք մասի կամ գլխիքի, եւ ամէն մէկ գլխիքը հատուածներու: Առաջին գլխիքը կը սկսի Հայոց ՆԱ եւ Քրիստոսի 952 թուականէն եւ կը հասնի մինչեւ Քրիստոսի 1052 եւ Հայոց Շ թուականը՝ պարունակելով իր մէջ հարիւր տարուան պատմութիւն: Երկրորդը կը սկսի Հայոց ՇԲ եւ Քրիստոսի 1053 թուականէն եւ կը հասնի մինչեւ Հայոց ՇԾ եւ Քրիստոսի 1102 թուականը՝ պարունակելով գրեթէ 50 տարուան պատմութիւն: Իսկ երրորդ գլխիքը կը սկսի այս թուականէն եւ կը հասնի Հայոց ՇՁ եւ Քրիստոսի 1137 թուականը՝ պարունակելով երեսուն տարուան պատմութիւն: Ուրեմն Մատթէոսի պատմութիւնը կը պարունակէ ընդ ամէնը 180 տարուան պատմութիւն՝ սկսելով Քրիստոսի 952 թուականէ եւ հասցնելով մինչեւ 1137: Բովանդակ առաջին գլխիքը՝ 100 տարուան պատմութիւն՝ Մատթէոս՝ ինչպէս ինքն ալ կ'ըսէ, քաղած է Ժամանակակից անձերէ եւ հին դերքերէ. ահա իր խօսքերը. «Արդ մինչեւ ցայս վայրս բազմաջան եւ աշխատաւոր քննութեամբ գտեալ զրեցաք զչարագրական գրեալս զհարիւրից ամաց, զորս ի բազում Ժամանակաց հետաքննեալ հասու եղաք: Ընդ այնքանեաց տեսողացն եւ լսողացն որք էին ի հին ամաց ծնեալք, եւ ընդ ընթերցողսն յառաջին պատմագրացն՝ որք ակնատեսք էին լեալք ամենայն եղելոցս» (Մատթ. Ուռհ., էջ 133. տիպ Երուս.): Մատթէոսի մեծ փափաքն էր արդէն գրել իր Ժամանակի պատմութիւնը՝ որպէս զի այն ամէն դէպքերն ու պատահարները չկորսուին, չմոռցուին. «Չայս ամենայն յօժարեցի ի տեսութիւն եւ ի մատենագրութիւն ամել զրով, վասն զի մի ի շարաշար դատութեան Ժամանակն (== Ժա-

\* Յօդուածս, ինչպէս յիշած եմ վարք. էջ 451, անգրանիկ բանասիրական գրուածքն է Հ. Անտեսի, ուղարկուած խմբագրութեան 1896 յունուարին, բայց մնացած անտիպ: Յարգելու համար իր յիշատակը կը հրատարակեմ զայս պիտի անփոփոխ: Յօդուածագրին անձանօք մնացած են Է. Ուտարի ի ուսումնասիրութիւնները ի մասին Մ. Ուտարիցայ: Հետաքրքրական են իր տեսութիւնները պնու մանուանդ, որ 1896էն հոկտ. 1913 չէ տեսած մատենագրիս մասին որ եւ է նոր ուսումնասիրութիւն: Անտեսի կատարած է մանր սրբագրութիւններ Ուտարիցայ Տարեգիրքին մէջ (Արարատ 1913, էջ 1144—1150) եւ Քննութիւններ Տարեգիրքիս մէջ երեւան եկած նոր բաներու (Բազմալիպ 1919, էջ 125—126, 149—151):

խմբագր. «Հանդէս Ամսօրեայ»ի: